Հավելված
ՀՀ կառավարության 2008 թվականի
դեկտեմբերի 11-ի N 1480 - Ն որոշման

2009 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐ
ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ

I. ՆԱԽԱԲԱՆ

1.1. Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ընդհանուր նկարագիրը

Փոքր և միջին ձեռնարկատիրության (այսուհետ՝ ՓՄՁ) պատմությունը Հայաստանի Հանրապետությունում առանձնանում է յուրահատուկ զարգացումներով, որոնք իրենց նշանակալի ազդեցությունն են թողնում երկրի տնտեսության գրեթե բոլոր ոլորտների վրա։

Կարևորելով ՓՄՁ-ի դերը երկրի տնտեսության զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, հասարակության միջին խավի ձևավորման, երկրում սոցիալական և քաղաքական կայունության ապահովման գործում՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը շարունակական քայլեր է ձեռնարկում ՓՄՁ-ին պետական աջակցության և դրա զարգացման ուղղությամբ։

ՓՄՁ-ին պետական աջակցության ծրագրերը հիմնված են Հայաստանի Հանրապետության որդեգրած տնտեսական քաղաքականության հիմնարար սկզբունքների վրա և նպաստում են երկրի, հատկապես նրա հեռավոր և սահմանամերձ բնակավայրերի տնտեսական զարգացմանը և անհամամասնությունների հաղթահարմանը, ինչը ներկայումս Հայաստանի Հանրապետության կառավարության տնտեսական քաղաքականության ռազմավարական և գերակա ուղղություններից մեկն է։ Այս առումով ՓՄՁ-ն իր առանձնահատկություններով և զարգացմամբ ընձեռած

հնարավորություններով հանդիսանում է այն անկյունաքարը, որը նշանակալի ազդեցություն ունի երկրի տնտեսական զարգացման վրա՝ ապահովելով զգալի սոցիալ-տնտեսական արդյունք և տարածքային համաչափ զարգացում։ Հայաստանի Հանրապետությունում կայուն տնտեսական աճի ապահովման քաղաքականության համատեքստում ՓՄՁ-ի զարգացումն է կոչված ապահովելու երկրի տնտեսական աճի կայունությունը՝ տնտեսությանը հաղորդելով նորարարական ուղղվածություն և ճկունություն։

Որպես ՓՄՁ-ին ուղղված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվող հետևողական տնտեսական քաղաքականության տրամաբանական արդյունք՝ վերջին տարիներին արձանագրվեց ՓՄՁ-ն բնութագրող ցուցանիշների դինամիկ աճ։

ՓՄՁ-ն նշանակալի դեր է խաղում երկրի համախառն ներքին արդյունքի (այսուհետ՝ ՀՆԱ) ձևավորման գործում. ըստ 2007 թվականի տվյալների՝ ՓՄՁ-ի տեսակարար կշիռը երկրի ՀՆԱ-ում կազմել է 41.0%։

Նշանակալի է ՓՄՁ-ի դերը նաև երկրի հարկաբյուջետային (ֆիսկալ) ցուցանիշների ձևավորման գործում. 2007 թվականի տվյալներով ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից հարկերի, տուրքերի և պարտադիր այլ վճարների տեսքով (բացառությամբ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների) Հայաստանի Հանրապետության պետական բյուջե է վճարվել 127.4 մլրդ դրամ կամ պետական բյուջե վճարված հարկերի 25.2%-ը։ ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների տեսակարար կշիռը 2007 թվականին վճարված պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գումարում կազմել է 45.7% կամ 38.9 մլրդ դրամ։

ՓՄՁ-ի ոլորտի մասնաբաժինը երկրի արտահանման մեջ 2007 թվականին կազմել է 17.4%, իսկ ներմուծման մեջ՝ 37.3%։ Նախորդ տարվա տվյալներով այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 16.9% և 36.8%։

Հայաստանում ՓՄՁ-ի զարգացման ինդեքսը՝ որպես ընդհանրական (ագրեգացված) տնտեսական ցուցանիշ, որը հաշվարկվել է ՄԱԿ-ի կողմից սահմանված մեթոդոլոգիայով, 2007 թվականին կազմել է 398.6, ինչը 2002 թվականի համեմատությամբ ավելացել է շուրջ 7 անգամ (2002 թվականին ՓՄՁ-ի զարգացման ինդեքսը կազմել է 58.1, 2003 թվականին՝ 82.0, 2004 թվականին՝ 117.8, 2005 թվականին՝ 171.9, 2006 թվականին՝ 237.2)։

ՓՄՁ-ի զարգացման միտումները պահպանվել են նաև 2008 թվականին։

Իրականացման փուլում է ՓՄՁ-ի պետական աջակցության 2008 թվականի ծրագիրը, որով նախատեսված ծրագրային միջոցառումների գերակշիռ մասը (ավելի քան 90%-ը) նպատակաուղղված է Հայաստանի Հանրապետության մարզերում՝ առավելապես սահմանամերձ և հեռավոր բնակավայրերում սկսնակ և գործող ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ցուցաբերմանը և, ընդհանուր առմամբ, Հայաստանի Հանրապետության մարզերում և տարածաշրջաններում տնտեսական ու գործարար ակտիվության բարձրացմանը։

Ըստ նախնական գնահատականների՝ 2008 թվականի ընթացքում վարկային երաշխավորությունների տրամադրման, որակի կառավարման միջազգային ստան-դարտների (համակարգերի), նորարարությունների ու ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման, ապրանքների (ծառայությունների) շուկաներ առաջմղման, սկսնակ գործա-րարների ձեռներեցությանն աջակցության ուղղություններով, ինչպես նաև գործարար ուսուցողական, տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն կցուցաբերվի Երևանում և Հայաստանի Հանրապետության մարզերում՝ շուրջ 4800 սկսնակ և գործող ՓՄՁ-ի սուբյեկտներին։

ՓՄՁ-ի զարգացման և աջակցության համակարգի կայացման ուղղությամբ իրականացված բարեփոխումները հնարավորություն տվեցին ազգային տնտեսություն ներմուծել ՓՄՁ-ի պետական քաղաքականության հետևողական իրագործման համար անհրաժեշտ գրեթե բոլոր հիմնարար սկզբունքներն ու մեխանիզմները։

Այս ամենի արդյունքում ներկայումս ՓՄՁ-ի զարգացումը տեղափոխվել է որակապես նոր փուլ, երբ ձևավորվում և ամրապնդվում է այս ուղղությամբ պետական աջակցության համակարգը, ընդլայնվում են ՓՄՁ-ի սուբյեկտներին ցուցաբերվող տեխնիկական և ֆինանսական աջակցության ծավալներն ու աշխարհագրությունը, կատարելագործվում են դրանց տրամադրման մեխանիզմներն ու ընթացակարգերը։ Այս համատեքստում պետական քաղաքականությունն ուղղված է ՓՄՁ-ի զարգացման և օտարերկրյա ներդրումների ներգրավման համար առավել բարենպաստ պայմանների ստեղծմանը, տնտեսության առավել ազատականացմանը, ազատ մրցակցության խթանմանը, վարչարարական ընթացակարգերի պարզեցմանն ու թափանցիկության ապահովմանը։

Հայաստանում ՓՄՁ-ի աջակցության ժամանակակից ենթակառուցվածքները և գործուն մեխանիզմները հիմք են հանդիսանում ՓՄՁ-ի հեռանկարային զարգացման համար՝ ուղղված գիտատար և նորարարական արտադրությունների աջակցությանը, առաջավոր տեխնոլոգիաների փոխանցման համար նպաստավոր պայմանների ձևավորմանը և ՓՄՁ-ի սուբյեկտների արտաքին տնտեսական գործունեության ընդլայնմանը։ Այս զարգացումների համատեքստում կարևորվում է միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների (ծրագրերի) ակտիվ ներգրավումը Հայաստանում ՓՄՁ-ի զարգացման և աջակցության ծրագրերի մշակման ու իրականացման գործընթացում։

ՓՄՁ-ին պետական աջակցության 2009 թվականի ծրագրային միջոցառումների (ծրագրային ուղղությունների) ընդլայնման նպատակով ինչպես ընթացքի մեջ գտնվող ծրագրերի շրջանակներում, այնպես էլ նոր ծրագրերի մշակման և իրականացման

ուղղությամբ 2009 թվականին կշարունակվի համագործակցությունը մի շարք միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների (ծրագրերի) հետ: Վերջիններիս հետ ձեռք բերված պայմանավորվածությունների շրջանակներում Հայաստանի Հանրապետության առանձին մարզերում աշխատանքներ կիրականացվեն միջազգային պրակտիկայում կիրառվող մեխանիզմների և տնտեսական զարգացման մոդելների, մասնավորապես՝ ֆինանսական միջոցների մատակարարման շղթաների, բիզնես-ինկուբատորների, կլաստերների ձևավորման և ներդրման ուղղությամբ: Այս համատեքստում համագործակցություն կիրականացվի Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, Ձեռնարկությունների եվրոպական ցանցի, Հոլանդիայի «Զարգացող երկրներից ներմուծման խթանման կենտրոնի», հոլանդական «Համագործակցության զարգացում» ծրագրի, Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակի և այլ կազմակերպությունների հետ:

1.2. ՓՄՁ-ի զարգացման հիմնախնդիրները

ՓՄՁ-ի զարգացման միտումների հետ մեկտեղ ՓՄՁ-ի ուսումնասիրությունների և վարչական մոնիթորինգի արդյունքում բացահայտվել են մի շարք հիմնախնդիրներ, որոնց դեռ շարունակում են բախվել ՓՄՁ-ի սուբյեկտները: Այդ հիմնախնդիրները պայմանավորված են օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով, մասնավորապես, ՓՄՁ-ի սուբյեկտների համար ֆինանսական (վարկային) միջոցների անմատչելիությամբ, գործարար տեղեկատվության և խորհրդատվության ստացման ու կադրերի մասնագիտական ուսուցման հարցերում առկա դժվարություններով, ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջմղման հետ կապված խնդիրներով, ինչպես նաև սկսնակ գործարարների համար ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հետ կապված գործարար հմտությունների պակասով:

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող տնտեսական քաղաքականության արդյունքում վերջին մի քանի տարվա ընթացքում դրական փոփոխություններ են կատարվել ՓՄՁ-ի կառուցվածքում, որոնք որակապես նոր հարթություն են տեղափոխել ՓՄՁ-ի սուբյեկտների գործունեությանն առնչվող հիմնախնդիրները՝ դրանց դրսևորման և ՓՄՁ-ի վրա ունեցած ազդեցության տեսանկյունից։

Չնայած նրան, որ վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում հիմնականում լուծվել են ՓՄՁ-ի սուբյեկտների գործունեությանը և զարգացմանը խոչընդոտող բազմաթիվ հիմնախնդիրներ ինչպես օրենսդրական դաշտում, այնպես էլ ՓՄՁ-ի սուբյեկտների ֆինանսավորման (վարկավորման) և տեխնիկական աջակցության ուղղություններով, երկրում դեռևս առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնք խոչընդոտ են հանդիսանում ՓՄՁ-ի հետագա զարգացման համար։

ՓՄՁ-ի զարգացման հիմնախնդիրները պայմանականորեն կարող են դասակարգվել ըստ օրենսդրական, ֆինանսական, տեխնիկական և ենթակառուցվածքային գործոնների, որոնք իրենց ազդեցությունն ունեն թե՛ սկսնակ և թե՛ գործող ՓՄՁ-ի սուբյեկտների գործունեության վրա։ Առկա հիմնախնդիրների դրսևորումները և սրությունը խիստ տարբերվում են նաև՝ կախված ՓՄՁ-ի սուբյեկտների գործելու վայրից (Երևան, Հայաստանի Հանրապետության մարզեր), հատկապես այդ տարբերությունները կտրուկ են արտահայտվում հեռավոր ու սահմանամերձ բնակավայրերում։

ՓՄՁ-ի զարգացմանը խոչընդոտող *օրենսդրական բնույթի հիմնախնդիրները* հանգում են հիմնականում ՓՄՁ-ի սուբյեկտների և պետական մարմինների միջև փոխհարաբերություններում դեռևս առկա մի շարք վարչարարական բնույթի խնդիրներին, մասնավորապես՝ կապված տնտեսավարող սուբյեկտների (ՓՄՁ-ի սուբյեկտների) ֆինանսական (հաշվապահական) հաշվետվությունների ներկայացման ընթացակարգերի, տնտեսավարող սուբյեկտներում (ՓՄՁ-ի սուբյեկտներում) անհարկի ստուգումներ իրականացնելու հաճախականության փաստերի հետ և այլն։

ՓՄՁ-ի զարգացմանը խոչընդոտող *ֆինանսական բնույթի հիմնախնդիրները* հանգում են հիմնականում ՓՄՁ-ի սուբյեկտների (հատկապես սկսնակ գործարարների) համար ֆինանսական (վարկային) միջոցներից օգտվելու անհնարինությանը՝ պայմանավորված դրանց կարճաժամկետայնությամբ և այլընտրանքային ֆինանսավորման (վարկավորման) աղբյուրների բացակայությամբ, ինչպես նաև երկարաժամկետ (3 տարվանից ավելի ժամկետով) ֆինանսական (վարկային) ռեսուրսների բացակայությանը, ինչը լուրջ խնդիր է հատկապես արտադրության ոլորտում, մասնավորապես, արտադրության գիտատար ճյուղերում գործող ՓՄՁ-ի սուբյեկտների համար։

ՓՄՁ-ի զարգացմանը խոչընդոտող առանձին հիմնախնդիր է նաև *միջմարզային և ներմարզային տնտեսական կոոպերացիայի ոչ բավարար մակարդակը։* Այս ենթատեքստում լուրջ խնդիրներ են տեղեկատվական հոսքերի մատչելիության, դրանց ընկալման, մշակման և փոխանակման խնդիրները, որոնց հետ անմիջականորեն կապված են ՓՄՁ-ի սուբյեկտների կառավարման և շուկայավարման հարցերը։

ՓՄՁ-ի սուբյեկտների, հատկապես Երևան քաղաքից դուրս գործող ՓՄՁ-ի սուբյեկտների և սկսնակ գործարարների համար լուրջ *հիմնախնդիր է իրենց բիզնեսի կազմակերպումն ու կառավարումը։* Այս հիմնախնդրի լուծման ուղղությամբ խորհրդատվական ընկերությունների կողմից մատուցվող ծառայությունների որակը դեռևս բավարար չէ, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության մարզերում (որոշ մարզերում նմանատիպ կառույցներ ընդհանրապես չեն գործում)։ Մյուս կողմից առկա է ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից նման ծառայությունների կարևորության չգիտակցման փաստը։ Այս համատեքստում որակյալ խորհրդատվական ծառայությունների կարիք ունեն հատկապես սկսնակ գործարարները և գործող այն ՓՄՁ-ի սուբյեկտները, որոնք փորձում են շուկայում ներկայացնել նորարարական արտադրանք կամ ծառայություն։

Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ կարելի է փաստել, որ Հայաստանի տնտեսական զարգացման ներկայիս փուլում ՓՄՁ-ի սուբյեկտների զարգացմանը խոչընդոտող հիմնական գործոններն են՝

ՓՄՁ-ի սուբյեկտների (հատկապես սկսնակ գործարարների) համար ֆինանսական (վարկային) միջոցների անմատչելիությունը՝ պայմանավորված դրանց կարճաժամկետայնությամբ և այլընտրանքային ֆինանսավորման (վարկավորման) աղբյուրների բացակայությամբ, ինչպես նաև երկարաժամկետ (3 տարուց ավելի ժամկետով) ֆինանսական (վարկային) ռեսուրսների բացակայությամբ, ինչը լուրջ խնդիր է հանդիսանում հատկապես արտադրության ոլորտում, մասնավորապես, արտադրության գիտատար ճյուղերում գործող ՓՄՁ-ի սուբյեկտների համար,

սկսնակ գործարարների համար ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հետ կապված գործարար հմտությունների և ֆինանսական միջոցների պակասը,

գործարար տեղեկատվության և խորհրդատվության ստացման ու կադրերի մասնագիտական ուսուցման հարցերում առկա դժվարությունները,

ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների)՝ շուկաներ առաջմղման հետ կապված խնդիրները, որոնք հիմնականում առնչվում են թողարկվող արտադրանքի որակի միջազգային չափանիշներին համապատասխանեցմանը, ինչին էականորեն խոչընդոտում է ժամանակակից լաբորատորիաների բացակայությունը, որոնց փորձաքննության արդյունքները կընդունվեն արտահանող երկրներում,

միջմարզային և ներմարզային տնտեսական կոոպերացիայի ոչ բավարար մակարդակը,

տեղեկատվական հոսքերի անմատչելիությունը և դրանց ընկալման, մշակման ու փոխանակման խնդիրները, որոնց հետ անմիջականորեն կապված են ՓՄՁ-ի սուբյեկտների կառավարման և շուկայավարման հարցերը,

շուկայական և մասնավորապես արտարժութային ռիսկերից ապահովագրման և դրանք կառավարելու հետ կապված բարդությունները, ինչը հատկապես խնդիրներ է ստեղծում արտադրության ոլորտում գործող ՓՄՁ-ի սուբյեկտների համար,

ՓՄՁ-ի սուբյեկտների համար տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ ընձեռվող հնարավորությունների թերի և ոչ բավարար օգտագործման հետևանքով շուկայում թույլ մրցակցային դիրքերը, ինչը մասամբ պայմանավորված է տեղեկատվական տեխնոլոգիաների անմատչելիությամբ և դրանց կիրառման հնարավորությունների վերաբերյալ ոչ բավարար պատկերացումներով։

Հայաստանում ՓՄՁ-ի պետական աջակցությանն ու զարգացմանը, գործարար ու ներդրումային միջավայրի բարելավմանը, ինչպես նաև նշված հիմնախնդիրների լուծմանն են ուղղված 2009 թվականի ընթացքում նախատեսված ծրագրային միջոցառումները, ինչը կարևոր նախապայման է երկրի տնտեսական աճի, մայրաքաղաքի և մարզերի համամասնական տնտեսական զարգացման, բնակչության զբաղվածության ապահովման ու նրա սոցիալական վիճակի բարելավման և, ընդհանուր առմամբ, երկրում աղքատության հաղթահարման շարունակականության ապահովման գործում։

II. ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2009 թվականի ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) մշակման և իրականացման հիմքը «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն է։

Ծրագրի մշակման համար հիմք են հանդիսացել նաև՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի ապրիլի 28-ի N 380-Ա որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը.

2) Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման քաղաքակա-նության և ռազմավարության հիմնադրույթները (Հայաստանի Հանրապետության կառա-վարության 2000 թվականի օգոստոսի 3-ի նիստի N 32 արձանագրության 3-րդ կետ).

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի N 994-Ն որոշմամբ հաստատված՝ աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը.

4) Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 8-ի N 1437-Ն որոշմամբ հաստատված՝ փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2008 թվականի ծրագիրը.

5) Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 870-Ն որոշումը.

6) Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 3-ի N 704-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության 2009-2011 թվա-կանների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը։

III. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակը պետական շարունակական աջակցությամբ ՓՄՁ-ի դերի աստիճանական բարձրացմանը նպաստելն է երկրի սոցիալ-տնտեսական և տարածաշրջանային կայուն զարգացման ասպարեզում։

Ծրագրի նպատակներն են՝

1) ՓՄՁ-ի սուբյեկտների աջակցության համապատասխան ենթակառուցվածքների ստեղծումը և ամրապնդումը.

2) ՓՄՁ-ի սուբյեկտների ֆինանսական և ներդրումային հնարավորությունների ընդլայնումը՝ նախապատվություն տալով հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում գործող ՓՄՁ-ի սուբյեկտներին.

3) ՓՄՁ-ի սուբյեկտների նորարարական և արտաքին տնտեսական գործունեության ընդլայնումը.

4) ՓՄՁ-ի սուբյեկտների՝ գործարար ուսուցողական, տեղեկատվական և խորհրդատվական ծառայություններից օգտվելու հնարավորությունների ընդլայնումը.

5) գործարարությամբ զբաղվելու հնարավորությունների ընդլայնումը, մասնավորապես՝ սկսնակ գործարարների, ինչպես նաև աշխատաշուկայում անմրցունակ խմբերի, հատկապես սահմանափակ կարողություններով անձանց համար.

6) նոր աշխատատեղերի ստեղծման և գործող աշխատատեղերի պահպանման միջոցով հանրապետությունում գործազրկության մակարդակի կրճատումը։

Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքներն են՝

1) երկրի ՀՆԱ-ում ՓՄՁ-ի սուբյեկտների տեսակարար կշռի հետագա ավելացմանը նպաստումը.

2) Հայաստանի Հանրապետության մարզերում՝ առավելապես հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում ՓՄՁ-ի սուբյեկտների թվաքանակի ավելացումը և դրանց հաշվին նոր աշխատատեղերի ստեղծումը.

3) Հայաստանի Հանրապետության մարզերում՝ առավելապես հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում գործող 70-75 ՓՄՁ-ի սուբյեկտի վարկային երաշխավորությունների տրամադրումը.

4) սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության շրջանակներում Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում՝ առավելապես հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում 200-250 սկսնակ գործարարների աջակցության ցուցաբերումը.

5) ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների)՝ շուկաներ առաջմղման ուղղությամբ 250-260 ՓՄՁ-ի սուբյեկտի աջակցության ցուցաբերումը.

6) 4000-4200 սկսնակ և գործող ՓՄՁ-ի սուբյեկտի գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցության ցուցաբերումը.

7) շուրջ 300 սկսնակ և գործող ՓՄՁ-ի սուբյեկտի գործարար ուսուցողական աջակցության ցուցաբերումը.

8) Հայաստանի Հանրապետության մարզերում գործարար ակտիվության բարձրացմանը նպաստումը՝ աջակցության ավելի քան 90 տոկոսն ուղղելով Հայաստանի Հանրապետության մարզերում՝ առավելապես հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտներին։

IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացման սկզբունքներն են՝

1) ծրագիրն իրականացվում է «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի (Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ) *(համաձայնությամբ)* և սույն ծրագրով նախատեսված ՓՄՁ-ին աջակցող այլ կառույցների միջոցով.

2) ծրագրի իրականացման շրջանակներում նախապատվությունը տրվում է արտադրության ոլորտում գործող, նորարարություններ և բարձր տեխնոլոգիաներ կիրառող, արտահանման ներուժ ունեցող ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցությանը, ինչպես նաև սկսնակ գործարարների ձեռներեցության զարգացմանը։ Այլ հավասար պայմաններում առաջնայնությունը տրվում է գործազուրկներին, սահմանափակ կարողություններով անձանց և ազատամարտիկներին.

3) ծրագրի իրականացման նշանակալի մասն ուղղվում է Երևան քաղաքից դուրս՝ Հայաստանի Հանրապետության մարզերում, հատկապես հեռավոր ու սահմանամերձ բնակավայրերում գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ցուցաբերմանը.

4) համաձայն «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ ՓՄՁ-ին պետական աջակցության տարեկան ծրագրերի ֆինանսավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին, որն արտացոլվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում՝ առանձին տողով.

5) միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ փոխհամաձայնությունների շրջանակներում 2009 թվականին կիրականացվեն ՓՄՁ-ի զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրեր՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

V. ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

2009 թվականի համար նախատեսված ծրագրային միջոցառումների համակարգն ընդգրկում է ՓՄՁ-ի զարգացման և պետական աջակցության հետևյալ հիմնական ուղղությունները՝

5.1. ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության համապատասխան ենթակառուցվածքների ստեղծում և ամրապնդում

Հայաստանում ՓՄՁ-ի զարգացման և աջակցության ուղղությամբ իրականացվող պետական քաղաքականության էական ձեռքբերումներից է երկրում ՓՄՁ-ի զարգացման ու պետական աջակցության ծրագրերն իրականացնող հիմնական կառույցի՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ստեղծումն ու կայացումը՝ Երևան քաղաքում գործող կենտրոնական գրասենյակով և Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում գործող մարզային մասնաճյուղերով (առանձին մարզերում՝ նաև ներկայացուցչություններով)։

Ծրագրի շրջանակներում աջակցություն կցուցաբերվի *Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կենտրոնական գրասենյակի, մարզային մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ամրապնդմանն ու դրանց գործունեության ընդլայնմանը, ինչպես նաև նոր ներկայացուցչության ստեղծմանը:*

Կարևորելով ՓՄՁ-ի դերը Հայաստանի Հանրապետության տարածքային տնտեսական զարգացման գործում, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության մարզերում (տարածաշրջաններում) ՓՄՁ-ի պետական աջակցության մատչելիության ապահովման անհրաժեշտությունը՝ 2003-2005 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում ստեղծվել են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի մասնաճյուղեր՝ ձևավորելով վերջինիս մարզային մասնաճյուղերի ցանց:

2009 թվականին նախատեսվում է բարձրացնել Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կենտրոնական գրասենյակի և մարզային մասնաճյուղերի նյութատեխնիկական ապահովվածության մակարդակը, ինչպես նաև շարունակել աշխատանքները Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կենտրոնական գրասենյակի և մարզային մասնաճյուղերի աշխատողների մասնագիտական հմտությունների զարգացման և որակավորման բարձրացման ուղղությամբ:

2009 թվականին նախատեսվում է աշխատանքներ իրականացնել նաև Հայաստանի Հանրապետության մարզերում գործարարությանն աջակցող, միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների (ծրագրերի) և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության ընդլայնման ուղղությամբ:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության մարզերի առանձին տարածաշրջանների, բնակավայրերի աշխարհագրական առանձնահատկությունները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մարզերի հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից իրականացվող աջակցության ծրագրերի մատչելիության ապահովման անհրաժեշտությունը՝ ի լրումն Հայաստանի

Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան և Բերդ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ, Վարդենիս և Մարտունի քաղաքներում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության միջազգային զարգացման դեպարտամենտի հետ համագործակցության շրջանակներում հիմնադրված ներկայացուցչությունների, 2009 թվականի ընթացքում աշխատանքներ կիրականացվեն Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալին քաղաքում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ներկայացուցչության հիմնադրման ուղղությամբ՝ հիմնվելով նման ներկայացուցչության անհրաժեշտության բացահայտման նպատակով իրականացված ուսումնասիրությունների արդյունքների վրա։

Տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության շրջանակներում 2009 թվականին պարբերաբար կկազմակերպվեն քննարկումներ և հանդիպումներ Հայաստանի Հանրապետության մարզերում, հատկապես հեռավոր և սահմանամերձ քաղաքային ու գյուղական համայնքներում գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտների հետ՝ նրանց գործունեությանը խոչընդոտող հիմնախնդիրների հստակեցման և Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից իրականացվող ծրագրերը դրանց լուծմանն ուղղելու նպատակով։

2009 թվականին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ում կշարունակի գործել «թեժ գիծը», որի միջոցով ձեռնարկատերերը հնարավորություն կունենան ներկայացնելու իրենց դիմում-բողոքները, հարցադրումները և առաջարկությունները, որոնք վերաբերվում են ձեռնարկատիրական գործունեությանն առնչվող օրենսդրությանն և վարչարարությանը։ «Թեժ գծի» միջոցով ստացված հեռախոսազանգերի սպասարկման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կընդլայնվի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի համագործակցությունը ձեռնարկատիրական գործունեությունը կարգավորող պետական կառույցների հետ, որոնց հետ համատեղ կմշակվեն «թեժ գծի» միջոցով ստացված հեռախոսազանգերի մշակման աշխատակարգեր։ «Թեժ գծի» միջոցով ստացված այն հեռախոսազանգերը,

որոնք կպահանջեն նեղ մասնագիտական խորհրդատվության տրամադրում, կսպասարկվեն համաձայն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ում գործող խորհրդատվական աջակցության ծրագրի ընթացակարգի: «Թեժ գծի» միջոցով գործարարներն իրենց հարցադիմումները կարող են ներկայացնել ինչպես հեռախոսազանգերի, այնպես էլ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ինտերնետային էջում գործող ինտերակտիվ խորհրդատվության բաղադրիչի միջոցով:

Բացի դրանից, 2009 թվականի ընթացքում աշխատանքներ կիրականացվեն պետություն-մասնավոր հատված համագործակցության խորացման ուղղությամբ: Պետություն-մասնավոր հատված համագործակցության ամրապնդման նպատակով հիմնականում աշխատանքներ կիրականացվեն մասնավոր հատվածի հետ համատեղ գործարար գաղափարների մշակման և դրանց իրագործման ուղղությամբ:

2009 թվականին կանցկացվի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից իրականացվող աջակցության ծրագրերի մոնիթորինգ, ինչը կնպաստի գործարարների հետ հետադարձ կապի հաստատմանը և իրականացվող ծրագրերի վերահսկելիության ապահովմանն ու արդյունավետության բարձրացմանը:

Նշված միջոցառումները, ընդհանուր առմամբ, կնպաստեն Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ-ի սուբյեկտների աջակցության համակարգի կայացման և զարգացման գործընթացին:

5.2. ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն

ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցության ցուցաբերման շրջանակներում կշարունակվի և կընդլայնվի ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագիրը: Դրա հետ մեկտեղ կդիտարկվի ՓՄՁ-ի սուբյեկտների կապիտալի ֆինանսավորման ծրագիրը, կմշակվեն և կքննարկվեն այլ ծրագրային նախագծեր, որոնց ընդունման և փորձնական գործարկման պայմաններում

դրական արդյունքների ապահովումը հիմք կհանդիսանա դրանց հետագա իրականացման համար։

5.2.1. ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագիր

ՓՄՁ-ի սուբյեկտների ֆինանսավորման (վարկավորման) հետ կապված հիմնախնդիրների հաղթահարման և այդ ուղղությամբ նրանց համար ֆինանսական (վարկային) ռեսուրսների մատչելիության ապահովման նպատակով ծրագրի շրջանակներում, որպես ծրագրային միջոցառում, 2009 թվականին կշարունակվի և կընդլայնվի ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագիրը։ Այն նպատակաուղղված է ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման միջոցով գրավադրման խնդրի հաղթահարմանը, Հայաստանի Հանրապետության մարզերում, հատկապես սահմանամերձ և հեռավոր բնակավայրերում, ՓՄՁ-ի սուբյեկտների վարկավորման հնարավորությունների ընդլայնմանը։

Ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկային երաշխավորությունները հնարավորություն են ընձեռում վարկունակ գործարարներին վարկավորվել գրավի անբավարարության և ցածր իրացվելիության պայմաններում, ինչն առավել արդիական է երկրի հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում գործող ՓՄՁ-ի սուբյեկտների համար։

ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրից կարող են օգտվել «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ ՓՄՁ-ի սուբյեկտ հանդիսացող առևտրային կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը։ Այստեղ նախապատվությունը կտրվի գրավի անբավարարության կամ ցածր իրացվելիության պատճառով չվարկավորված արտադրության կամ ծառայությունների ոլորտում գործող, ինչպես նաև տնտեսական ցածր ակտիվությամբ առանձնացող բնակավայրերում և շրջաններում առևտրի ոլորտում գործող շահառուներին կամ ներմուծումը փոխարինող, արտահանող, արտահանման ներուժ

ունեցող, նորարարություններ ներդնող և նոր տեխնոլոգիաներ կիրառող ՓՄՁ-ի սուբյեկտներին։

Վարկային երաշխավորությունների առավելագույն ժամկետը կազմում է երեք տարի։ Ծրագրի շրջանակներում ՓՄՁ-ի սուբյեկտներին տրամադրվող վարկային երաշխավորության գումարը չի կարող գերազանցել վարկային պարտավորության (վարկի մայր գումար և տոկոսներ) 70%-ը և 10 մլն դրամը։ Ծրագրի շրջանակներում վարկային երաշխավորությունները տրամադրվում են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի 6 գործընկեր բանկերի (Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ, Արդշինինվեստբանկ, Անելիք բանկ, Ինեկոբանկ, Յունիբանկ և ՎՏԲ բանկ) միջոցով, որոնց հետ փոխհարաբերությունները կարգավորվում են պայմանագրով։

Որպես երաշխավորագրերի ապահովման միջոց գործընկեր առևտրային բանկերում ավանդադրվում են դրամական միջոցներ, որոնք ըստ առանձին երաշխավորագրի դեպոնացվում (գրավադրվում) են համապատասխան չափաքանակով։

2009 թվականի ընթացքում աշխատանքներ կիրականացվեն ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի շրջանակներում շահառուների մոնիթորինգի համակարգի կատարելագործման ուղղությամբ, որի արդյունքները հիմք կհանդիսանան սույն ծրագրի իրականացման մեխանիզմների և ընթացակարգերի կատարելագործման համար։ Միաժամանակ, համագործակցության դաշտն ընդլայնելու և խորացնելու նպատակով 2009 թվականի ընթացքում բանակցություններ կվարվեն նոր առևտրային բանկերի հետ՝ ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրում ներգրավելու նպատակով։

Ինչպես 2008 թվականի, այնպես էլ 2009 թվականի ընթացքում ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագիրը կիրականացվի միայն Հայաստանի Հանրապետության մարզերում, ընդ որում, առաջնայնությունը կտրվի հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում գործող ՓՄՁ-ի

սուբյեկտներին։ Երևան քաղաքում, որպես բացառություն, կդիտարկվի միայն նորարարական ծրագրեր ներկայացնող ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման հարցը, որոնց կողմից ներկայացվող հայտերը կդրվեն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի քննարկմանը։

5.2.2. ՓՄՁ-ի սուբյեկտների կապիտալի ֆինանսավորման ծրագիր

Կապիտալի ֆինանսավորման ցանկացած մեխանիզմ հնարավորություն է ընձեռում տնտեսավարող սուբյեկտներին խոշոր գործարար նախագծեր իրագործելու և կառավարելու նպատակով ներգրավելու կապիտալ միջոցներ։

Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2008 թվականի ծրագրի շրջանակներում մշակվել են գործող ՓՄՁ-ի սուբյեկտների կապիտալի ֆինանսավորման ծրագրի մեխանիզմները, որի շրջանակներում նախատեսվում է գործող ՓՄՁ-ի սուբյեկտների կապիտալի որոշակի բաժնեմասի կամ փայամասնակցության ձեռք-բերում (նոր արտադրական հզորությունների կամ նոր արտադրական ուղղությունների զարգացման ֆինանսավորման նպատակով)։

ՓՄՁ-ի սուբյեկտների կապիտալի ֆինանսավորման ծրագրի շրջանակներում ՓՄՁ-ի սուբյեկտների կապիտալում ներդրումները նախատեսվում է իրականացնել Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի կողմից հավանության արժանացած և կոնկրետ գործարար նախագծի իրագործման համար անհրաժեշտ գումարների սահմաններում։ Սույն ծրագրի շրջանակներում բաժնեմասերում ներդրումները կամ փայամասնակցության ձեռք բերումը չի ենթադրում փոխառու միջոցների տրամադրում, այլ հիմնվում է բաժնեմասի հաշվեկշռային կամ շուկայական գնի աճի և ձեռնարկատիրական շահույթից ակնկալվող դիվիդենտի սկզբունքի վրա։

ՓՄՁ-ի սուբյեկտների կապիտալի ֆինանսավորման ծրագրի մեկնարկից հետո 3-5 տարվա ընթացքում նախատեսվում է բաժնեմասի վաճառք ուղղակի հասարակական առաջարկի սկզբունքով, որը մինչ այդ կենթադրի Հայաստանի ֆոնդային բորսայում տվյալ

կազմակերպության արժեթղթերի գրանցման և ցուցակման գործընթացների, ինչպես նաև «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված աշխատանքների իրականացում։

5.2.3. ՓՄՁ-ի սուբյեկտներին տրամադրվող վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման ծրագիր

2009 թվականի ընթացքում կշարունակվի ՓՄՁ-ի սուբյեկտներին տրամադրվող վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման ծրագրի իրականացումը, որի նպատակն է խթանել Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 14-ի «Հեռավոր, սահմանամերձ, բարձրալեռնային, լեռնային, մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղական բնակավայրերի ցանկերը սահմանելու մասին» N 1017-Ն որոշմամբ սահմանված բնակավայրերում գործող ՓՄՁ-ի սուբյեկտների վարկային ներդրումների ծավալը՝ վարկառուների համար վարկավորման գնի նվազման միջոցների նկատմամբ պահանջարկի բարձրացման միջոցով։

Ծրագրի մշակման ժամանակ հաշվի է առնվել այն հանգամանքը, որ հատկապես հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում բանկերի կողմից տրվող վարկերի տոկոսադրույքը բավականին բարձր է, որը, ըստ գնահատականների, ներկայումս կազմում է 20-22%, ինչը խոչընդոտ է հանդիսանում նշված բնակավայրերի տնտեսական զարգացման համար։ Վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորումը հնարավորություն է ընձեռում ՓՄՁ-ի սուբյեկտներին առավել մատչելի պայմաններով օգտվել վարկային ծառայություններից, ինչն իր հերթին կհանգեցնի այդ բնակավայրերում տնտեսական ակտիվության բարձրացմանը։

Սուբսիդավորման ենթակա վարկի փաստացի տարեկան տոկոսադրույքի չափը սահմանվել է 10 տոկոսային կետ (հաշվարկվում է վարկի մնացորդի նկատմամբ), որը սակայն, չի կարող գերազանցել տարեկան 500,000 դրամը։

2008 թվականի ընթացքում ընդլայվել է նաև ՓՄՁ-ի սուբյեկտներին տրամադրվող վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման ծրագրի աշխարհագրությունը, և ներկայումս, բացի Հայաստանի Հանրապետության Տավուշի և Գեղարքունիքի մարզերից ծրագիրն իրագործվում է նաև Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Լոռու, Շիրակի, Սյունիքի և Վայոց ձորի մարզերում:

5.3. Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն

Սկսնակ գործարարների ձեռներեցության զարգացման նպատակով աջակցություն կցուցաբերվի իրատեսական գործարար նախաձեռնություններով հանդես եկող սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտների մասնակցությանն սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության ծրագրին:

Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության ծրագրի նպատակն է նոր ՓՄՁ-ի սուբյեկտների ստեղծմանը նպաստելը և նրանց աջակցություն ցուցաբերելը հիմնադրման և կայացման շրջանում: Ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում կիրականացվեն միջոցառումներ, որոնք կներառեն ուսուցման, մասնագիտական խորհրդատվության, ինչպես նաև տեղեկատվության տրամադրման բաղադրիչներ:

Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության ծրագրի շրջանակներում, որպես նորաստեղծ բիզնեսի կայացման վերջնական արդյունք, լավագույն գործարար նախաձեռնությունների (գործարար ծրագրերի) իրականացման ուղղությամբ սկսնակ գործարարներին կցուցաբերվի ֆինանսական աջակցություն (վարկավորում)՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործընկեր առևտրային բանկերի միջոցով՝ առավելագույնը 2 մլն դրամ՝ տարեկան 12% տոկոսադրույքով, մինչև 3 տարի մարման ժամկետով: Լավագույն գնահատականի արժանացած գործարար ծրագրերը կներկայացվեն վարկավորման, ընդ որում, վարկային պարտավորությունը 100%-ով կերաշխավորվի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից:

Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության ծրագրում սկսնակ գործարարների ներգրավման նպատակով Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը կհամագործակցի ինչպես միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների (ծրագրերի), այնպես էլ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության հետ:

Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության ծրագրով համապատասխան աջակցություն կարող են ստանալ նաև զբաղվածության պետական ծրագրի շրջանակներում մասնագիտական ուսուցում անցած և պետական գրանցման համար ֆինանսական աջակցություն ստացած անձինք՝ ներկայացվող պահանջներին համապատասխանելու պարագայում:

Հաշվի առնելով իրականացված միջոցառումների գծով նախորդ տարիներին ձեռք բերված փորձը՝ 2009 թվականի ընթացքում աշխատանքներ կիրականացվեն սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության ծրագիրը կատարելագործելու և ընդլայնելու ուղղությամբ:

Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության ծրագիրը 2009 թվականին կիրականացվի միայն Հայաստանի Հանրապետության մարզերում՝ մրցութային կարգով ընտրված մասնագիտացված կազմակերպությունների միջոցով:

5.4. ՓՄՁ-ի սուբյեկտներում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցություն

Շուկայական տնտեսավարման պայմաններում առանձնակի կարևոր նշանակություն ունի ՓՄՁ-ի սուբյեկտներում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը, որը նպաստում է տեղական արտադրանքի մրցունակության բարձրացմանը, ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից գիտատեխնիկական արդյունքների արդյունավետ օգտագործմանն ու նրանց արտահանման ներուժի ընդլայնմանը:

Այս ուղղությամբ կշարունակվի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից մշակված ՓՄՁ-ի սուբյեկտներում նորարարությունների, ժամանակակից տեխնոլոգիաների և նոր արտադրատեսակների ներդրման հետազոտական և մշակման աշխատանքների աջակցության ծրագրի իրականացման գործընթացը, որի շրջանակներում նախապես մշակված հարցաթերթիկների միջոցով կհավաքագրվեն ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից ներկայացվող գործարար գաղափարներ: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից իրականացվող աջակցության ծրագրերի շրջանակներում ինչպես գործող, այնպես էլ սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից իրատեսական նախաձեռնություններ ներկայացնելու պարագայում դրանց առևտրայնացման նպատակով վերջիններիս կցուցաբերվի տեխնիկական աջակցություն:

Բացի դրանից, այս ուղղությամբ աշխատանքներ կիրականացվեն նաև տնտեսության մի շարք ոլորտներում նոր ծրագրերի մշակմանն աջակցության և դրանց իրականացումն ապահովելու նպատակով ներդրողներ ներգրավելու և ծրագրերի իրագործումն ապահովելու համար:

5.5. ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջմղմանն աջակցություն

Շուկայական տնտեսավարման պայմաններում արդյունավետ ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հիմնական գրավականն է թողարկվող արտադրանքը (մատուցվող ծառայությունները) պատշաճ մակարդակով շուկայում ներկայացնելը, սպառման ծավալներն ավելացնելը և, ընդհանուր առմամբ, թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջ մղելը:

Ելնելով նշված նկատառումներից՝ 2009 թվականին ծրագրի շրջանակներում աջակցություն կցուցաբերվի ՓՄՁ-ի սուբյեկտներում որակի կառավարման (ԻՍՕ 9000 շարքի), սննդամթերքի արտադրության ոլորտում արդյունաբերական վտանգների վերլուծության և կրիտիկական կետերի վերահսկման և այլ միջազգային ստանդարտների

ներդրմանը, մասնավորապես, աջակցություն կցուցաբերվի ՓՄՁ-ի սուբյեկտներում որակի կառավարման ԻՍՕ 9001-2000 համակարգի ներդրման (խորհրդատվական կամ հավաստագրման աշխատանքներ), ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման միջոցով ՓՄՁ-ի սուբյեկտների կառավարման համակարգերի բարելավման ուղղություններով՝ ըստ ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից ներկայացված հայտերի։ Աջակցությունն առավելապես կտրամադրվի Հայաստանի Հանրապետության մարզերում գործող ՓՄՁ-ի սուբյեկտներին։

ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջմղման նպատակով ծրագրի շրջանակներում աջակցություն կցուցաբերվի արտահանման ներուժ ունեցող և հեռանկարային ՓՄՁ-ի սուբյեկտներին՝ Հայաստանում և արտերկրներում կազմակերպվող ցուցահանդեսներին նրանց մասնակցության ապահովման նպատակով։

ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքը (մատուցվող ծառայությունները) շուկայում ներկայացնելուն ուղղված աջակցությունը կիրականացվի նաև զանգվածային լրատվության միջոցներով (ԶԼՄ-ներ) լուսաբանման, ապրանքների փաթեթավորման, պիտակավորման, ձևավորման և այլ համապատասխան գործընթաց-ների ուղղությամբ՝ ըստ ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից ներկայացված հայտերի։

Բացի դրանից, համապատասխան միջոցառումներ կիրականացվեն նաև էլեկտրո-նային հաղորդակցության միջոցներով, մասնավորապես, ճանաչված ինտերնետային կայքերում ՓՄՁ-ի սուբյեկտների և նրանց կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) վերաբերյալ տեղեկատվության (մի քանի լեզուներով) տեղադրման ուղղությամբ, ինչը կխթանի տեղական և միջազգային շուկայում ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) առաջմղումը, որն էլ վերջին հաշվով կնպաստի ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի

(մատուցվող ծառայությունների) մրցունակության և ՓՄՁ-ի սուբյեկտների հեղինակության բարձրացմանը։

5.6. ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն

Ծրագրի շրջանակներում սկսնակ և գործող ՓՄՁ-ի սուբյեկտներին կցուցաբերվի գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն՝ տնտեսավարող սուբյեկտների (ՓՄՁ-ի սուբյեկտների) պետական գրանցման, ձեռնարկության տնտեսական գործունեության վերլուծության, շուկայական հետազոտությունների իրականացման, կառավարման և շուկայավարման, գործընկերների որոնման ու նրանց հետ գործարար կապերի հաստատման, սարքավորումների և հոսքագծերի ձեռքբերման, նորարարությունների կիրառման և ժամանակակից տեխնոլոգիաների առնտրայնացման, ֆինանսական միջոցների ներգրավման և կառավարման, մտավոր սեփականության պաշտպանության, լիցենզավորման, ստանդարտացման, համապատասխանության հավաստման, գործարար և ներդրումային ծրագրերի մշակման, հաշվապահական հաշվառման, հաշվապահական (ֆինանսական) հաշվետվությունների կազմման ու ներկայացման, հարկային ու մաքսային ձևակերպումների և այլ կարևոր ուղղություններով՝ ըստ ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից ներկայացված հայտերի։

2009 թվականին կշարունակվի Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի և Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրերի հիման վրա գործարարությանն առնչվող օրենսդրական դաշտում կատարված փոփոխությունների մասին ամփոփ տեղեկատվական նյութերի պատրաստման աշխատանքները։ Ամփոփ տեղեկատվական նյութերը մասնագիտացված գործարար ծառայություններ մատուցող կազմակերպությունների (ԳԾՄԿ-ներ) կողմից փորձաքննության ենթարկվելուց հետո կտրամադրվեն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի

մարզային մասնաճյուղերին՝ ՓՄՁ-ի սուբյեկտներին համապատասխան տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու նպատակով։

Դրա հետ մեկտեղ միջոցառումներ կիրականացվեն գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցության ծրագրերն առավել նպատակային և արդյունավետ դարձնելու ուղղությամբ՝ հատկապես Հայաստանի Հանրապետության մարզերում։ Մասնավորապես, կընդլայնվի գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցության տարածաշրջանային ընդգրկվածությունը՝ ներգրավելով հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում գործող ՓՄՁ-ի սուբյեկտներին և սկսնակ գործարարներին։ Այդ նպատակով հանդիպումներ կկազմակերպվեն գործարար համայնքի ներկայացուցիչների հետ՝ ՓՄՁ-ի սուբյեկտների և սկսնակ գործարարների գործունեության համար տվյալ ուղղությամբ իրականացվող ծրագրերի նշանակությունն ու առանձնահատկությունները պարզաբանելու համար։

2009 թվականի ընթացքում աշխատանքներ կիրականացվեն նեղ մասնագիտական հմտություններ պահանջող խորհրդատվական աջակցության ծրագրերի իրականացման, ինչպես նաև ՓՄՁ-ի սուբյեկտների համար գործարար խորհրդատվական ծառայությունների մատուցման մատչելիության ապահովման ուղղությամբ։ Այդ նպատակով Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից աջակցություն կցուցաբերվի ՓՄՁ-ի սուբյեկտներին՝ մրցութային կարգով ընտրված ԳԾՄԿ-ների միջոցով ՓՄՁ-ի սուբյեկտներին որակյալ գործարար խորհրդատվության տրամադրման ճանապարհով։

Գործարարների մոտ առաջացող խնդիրները՝ կապված հաշվապահական հաշվառման, հարկային և մաքսային փաստաթղթաշրջանառության և վարչարարության հետ, ինչպես նաև վարչական իրավախախտումների արդյունքում վճարված տույժերի և տուգանքների գերակշիռ մասը պայմանավորված են ՓՄՁ-ի սուբյեկտներում փորձառու հաշվապահների՝ հաշվապահական հաշվառում վարելու հմտությունների պակասով։ Միաժամանակ, այն կազմակերպությունները, որոնք ցանկանում են դիմել մասնագետ-

ների խորհրդատվությանը, հաճախ բարդություններ են ունենում՝ պայմանավորված մի շարք հանգամանքներով՝ ԳԾՄԿ-ների վերաբերյալ տեղեկատվության պակաս, ԳԾՄԿ-ների գործունեության նկատմամբ վստահության և վերահսկողության մեխանիզմների պակաս, գործարարների և ԳԾՄԿ-ների միջև պայմանագրային հարաբերությունների ոչ հստակություն, ԳԾՄԿ-ների մոտ պարզ և միմյանց հետ համադրելի գնային քաղաքականության բացակայություն, որոշ ՓՄՁ-ի սուբյեկտների համար ԳԾՄԿ-ների կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու ոչ բավարար մատչելիություն:

Նշված խնդիրները հաղթահարելու նպատակով ծրագրի շրջանակներում կգործարկվի հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից ՓՄՁ-ի սուբյեկտներին մատուցվող ծառայությունների արժեքի համաֆի-նանսավորման ծրագիրը, որը կիրականացվի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործող ընթացա-կարգերի համաձայն: Սույն ծրագրի շրջանակներում նախատեսվում է մեկ տարվա կտրվածքով աջակցություն ցուցաբերել ՓՄՁ-ի սուբյեկտներին՝ համաֆինանսավորելով ԳԾՄ-ների կողմից նրանց մատուցվող ծառայությունների արժեքը: Մատուցվող ծառայությունների շրջանակը կընդգրկի ՓՄՁ-ի սուբյեկտներում հաշվապահական հաշվառման վարումը, հարկային հաշվետվությունների կազմումը, հարկային խորհրդատվությունը, դատարանում ՓՄՁ-ի սուբյեկտների շահերի պաշտպանությունը, ինչպես նաև հարկային համակարգին առնչվող այլ ուղղություններ:

Ծրագրով նախատեսվում է նաև տեղեկատվական ու վերլուծական նյութերի (մասնագիտական և տեղեկատվական բնույթի գործարար ուղեցույցների, բրոշյուրների) հրատարակում, որոնք անվճար կտրամադրվեն ՓՄՁ-ի սուբյեկտներին և բիզնեսին աջակցող կազմակերպություններին, ինչպես նաև կտեղադրվեն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ինտերնետային էջում:

Դրա հետ մեկտեղ ծրագրի շրջանակներում ԶԼՄ-ների միջոցով կապահովվի համապատասխան տեղեկատվություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից տրամադրվող

աջակցության ուղղությունների (ծրագրերի) մասին, ինչպես նաև կշարունակվի հեռարձակվել «ՓՄՁ լրատու» հեռուստահաղորդաշարը, որի միջոցով գործարար համայնքին կներկայացվի տեղեկատվություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից տրամադրվող աջակցության ուղղությունների (ծրագրերի) մասին: Բացի դրանից, կներկայացվի նաև առանձին ՓՄՁ-ի սուբյեկտների առաջավոր փորձը: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից տրամադրվող աջակցության ուղղությունների (ծրագրերի) մասին տեղեկատվություն կտարածվի նաև Հայաստանի Հանրապետության մարզերում գործող ԶԼՄ-ների միջոցով:

2009 թվականին կշարունակի գործել և կընդլայնվի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ինտերնետային էջը, որը պարբերաբար կհամալրվի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործունեության մասին և գործարարների համար օգտակար այլ տեղեկատվությամբ:

2009 թվականին կիրականացվեն աշխատանքներ Հայաստանի Հանրապետությունում գործող ՓՄՁ-ի սուբյեկտների մասին տեղեկատվական բազայի համալրման ուղղությամբ: Գործող ՓՄՁ-ի սուբյեկտների մասին հավաքագրված տեղեկատվությունը կամփոփվի մեկ միասնական էլեկտրոնային համակարգում, որը պարբերաբար կհամալրվի գործող ՓՄՁ-ի սուբյեկտների մասին նոր տեղեկատվությամբ:

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի մարզային մասնաճյուղերի կողմից յուրաքանչյուր ամիսը 1-2 անգամ հիմնականում Հայաստանի Հանրապետության մարզերի հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում կկազմակերպվեն խմբային հանդիպումներ գործարարների հետ: Հանդիպումների ընթացքում գործարարներին կներկայացվի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործունեությունը, աջակցության ծրագրերը, դրանցից օգտվելու ընթացակարգերը, կքննարկվեն գործարարներին հետաքրքրող հարցերը, որոնց վերաբերյալ մասնակիցներին կտրամադրվի համապատասխան խորհրդատվություն և տեղեկատվական նյութեր: Այդ նպատակով Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը կհամագործակցի նաև գործարար համայնքը ներկայացնող հասարակական կազմակերպությունների և միությունների,

տեղական ինքնակառավարման մարմինների հետ, ինչը հնարավորություն կտա իրականացվող աջակցության ծրագրերում ներգրավել ՓՄՁ-ի սուբյեկտների լայն շրջանակ։

5.7. ՓՄՁ-ի սուբյեկտներին ուսուցողական աջակցություն

Ծրագրի շրջանակներում գործարար հմտությունների զարգացման և գործարար գիտելիքների մակարդակի բարձրացման նպատակով մրցութային կարգով ընտրված կազմակերպությունների միջոցով ՓՄՁ-ի սուբյեկտների համար կկազմակերպվեն մասնագիտական ուսուցման և վերապատրաստման դասընթացներ՝ ըստ ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից ներկայացված հայտերի։

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՓՄՁ-ի սուբյեկտներին մեծամասամբ հասանելի չեն գործարար ուսուցողական ծառայությունները՝ հիմնականում դրանց թանկության պատճառով, ծրագրի շրջանակներում աջակցություն կցուցաբերվի այդ դասընթացներին նրանց մասնակցության ուղղությամբ՝ մասնակիորեն վճարելով դասընթացների արժեքը։

Նման դասընթացներին մասնակցությունն սկսնակ գործարարներին հնարավորություն կընձեռի ծանոթանալու ձեռնարկատիրական գործունեության հիմունքներին, իսկ գործող ՓՄՁ-ի սուբյեկտներին՝ ստանալու պարզաբանումներ և ուղեցույցներ Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ կատարվող փոփոխությունների, գործող հարկային և մաքսային ընթացակարգերի, ֆինանսական միջոցների ներգրավման և կառավարման, գործարար ու ներդրումային ծրագրերի կազմման վերաբերյալ, ինչպես նաև ձեռք բերելու համապատասխան մասնագիտական գիտելիքներ և նոր հմտություններ՝ կառավարման, շուկայավարման, գործարար էթիկայի, բանակցությունների վարման, վաճառքի հմտության և գործարարությանն առնչվող այլ բնագավառներում։

Ուսուցողական ծառայություններ մատուցող կազմակերպությունների ներկայացուցիչների մասնագիտական պատրաստվածության մակարդակի բարձրացման և նրանց կողմից մատուցվող ծառայությունների որակի բարելավման նպատակով ծրագրի

շրջանակներում վերջիններիս համար կկազմակերպվեն վերապատրաստման դասընթացներ՝ համագործակցելով միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների (ծրագրերի) հետ։

Աջակցություն կցուցաբերվի նաև ՓՄՁ-ի սուբյեկտների հատուկ մասնագիտական ունակությունների և աշխատանքային հմտությունների կատարելագործման ուղղությամբ՝ դրանց վերաբերյալ համապատասխան հայտերի առկայության պարագայում։

Ծրագրի շրջանակներում (համաֆինանսավորման սկզբունքով) աջակցություն կցուցաբերվի ՓՄՁ-ի սուբյեկտներին՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից կազմակերպվող մասնագիտական ուսուցման և վերապատրաստման դասընթացներին ՓՄՁ-ի սուբյեկտների մասնակցության ապահովման ուղղությամբ։

Դրա հետ մեկտեղ միջոցառումներ կիրականացվեն մասնագիտական ուսուցման և վերապատրաստման դասընթացների վերաբերյալ ՓՄՁ-ի սուբյեկտների տեղեկացվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ, ինչը կնպաստի այդ դասընթացների նկատմամբ պահանջարկի բարձրացմանը։ Նշված դասընթացների կազմակերպման գործընթացում կներգրավվեն նաև Երևան քաղաքից դուրս՝ Հայաստանի Հանրապետության մարզերում գործող, տվյալ ոլորտում մասնագիտացված ԳԾՄԿ-ները, ինչը Հայաստանի Հանրապետության մարզերում գործող ՓՄՁ-ի սուբյեկտներին հնարավորություն կընձեռի տեղերում մասնակցելու մասնագիտական ուսուցման և վերապատրաստման դասընթացներին։ Բացի դրանից, Երևան քաղաքում և Հայաստանի Հանրապետության մարզերում կկազմակերպվեն հատուկ մասնագիտացված դասընթացներ՝ ըստ ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից ներկայացված հայտերի։

Նման դասընթացների նկատմամբ Հայաստանի Հանրապետության մարզերում գործող ՓՄՁ-ի սուբյեկտների պահանջարկի բացահայտման նպատակով Հայաստանի

ՓՄՁ ԶԱԿ-ի մարզային մասնաճյուղերը և ներկայացուցչությունները մարզային համայնքներում կկազմակերպեն գործարար հանդիպումներ, հարցումներ, քննարկումներ։

2009 թվականի ընթացքում տնտեսական դաշտին առնչվող Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ փոփոխություններ կատարվելու պարագայում, առանձին դեպքերում, կատարված փոփոխությունների ազդեցության և արդյունքների վերաբերյալ ՓՄՁ-ի սուբյեկտներին իրազեկման և պարզաբանման նպատակով «բաց դռների» սկզբունքով կկազմակերպվեն ուսուցողական բնույթի միջոցառումներ։

5.8. Հայաստանում «Ձեռնարկությունների եվրոպական ցանցի» հաղորդակցման կենտրոնի գործունեության կազմակերպում

2008 թվականից Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը, որպես գործընկեր կազմակերպություն, հյուրընկալում է Հայաստանում «Ձեռնարկությունների եվրոպական ցանցի» հաղորդակցման կենտրոնին, որը ՓՄՁ-ի ոլորտի աջակցության նպատակով Եվրամիության նոր նախաձեռնություններից մեկն է։ Հայաստանում «Ձեռնարկությունների եվրոպական ցանցի» հաղորդակցման կենտրոնի կողմից 2009 թվականի ընթացքում նախատեսվում է միջոցառումների լայն շրջանակ, որոնք ուղղված են լինելու «Ձեռնարկությունների եվրոպական ցանցի» գործունեության մասին տեղեկատվության լուսաբանմանն ու տարածմանը հնարավոր շահառուների շրջանում։ Մասնավորապես, նախատեսվում է պատրաստել ու հեռարձակել հեռուստահաղորդումներ, գովազդային հոլովակներ հեռուստատեսությամբ և ռադիոյով, տարածել տարաբնույթ հոդվածներ ու էլեկտրոնային նորություններ «Ձեռնարկությունների եվրոպական ցանցի» գործունեության և ընթացիկ միջոցառումների վերաբերյալ, ինչպես նաև այլ հնարավոր միջոցներով «Ձեռնարկությունների եվրոպական ցանցի» մասին տեղեկատվությունը հասանելի դարձնել բոլոր գործարարներին։

«Ձեռնարկությունների եվրոպական ցանցի» հաղորդակցման կենտրոնը տեղեկատվություն է փոխանակելու ինչպես տեխնոլոգիաների, հետազոտությունների,

այնպես էլ համագործակցության հնարավոր այլ ուղղություններով՝ կապող օղակ հանդիսանալով հայ գործարարների և «Ձեռնարկությունների եվրոպական ցանցի» անդամ մյուս երկրներում գործունեություն ծավալող գործարարների միջև՝ շուրջ 40 երկրներում գործող ավելի քան 600 աջակցող կազմակերությունների միջոցով:

Հայաստանում «Ձեռնարկությունների եվրոպական ցանցի» գործունեության շրջանակներում ապահովվելու են նաև հայ գործարարների և Եվրոպայում գործող նրանց հնարավոր գործընկերների միջև գործարար կապերը և տեղեկատվության փոխանակումը: Անհրաժեշտության դեպքում աշխատանքներ կիրականացվեն նաև փոխադարձ այցելություններ և միջոցառումներ կազմակերպելու ուղղությամբ, որոնց միջոցով գործարարները հնարավորություն կստանան հստակեցնելու համագործակցության պայմաններն ու անձնական կապեր հաստատել գործընկերների հետ:

Բացի դրանից, 2009 թվականի ընթացքում «Ձեռնարկությունների եվրոպական ցանցի» գործունեության շրջանակներում Հայաստանում նախատեսվում է կազմակերպել «ՓՄՁ-ի եվրոպական շաբաթ 2009» խորագրով միջոցառում:

5.9. Միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ-ի զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակում և իրականացում

2009 թվականին աշխատանքներ կիրականացվեն Հայաստանում ՓՄՁ-ի զարգացմանն ուղղված համապատասխան ծրագրեր (միջոցառումներ) իրականացնող միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնման, մասնավորապես, ՓՄՁ-ի զարգացման (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի, ՓՄՁ-ի պետական աջակցության տարեկան ծրագրերով նախատեսված միջոցառումների իրականացման ուղղությամբ:

Այս համատեքստում 2009 թվականին կշարունակվի համագործակցությունը ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակեր-

պության երևանյան գրասենյակի, Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության, «Ձեռնարկությունների եվրոպական ցանցի», Հոլանդիայի «Զարգացող երկրներից ներմուծման խթանման կենտրոնի», հոլանդական «Համագործակցության զարգացում» ծրագրի, ինչպես նաև այլ միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների (ծրագրերի) հետ:

2009 թվականին աշխատանքներ կիրականացվեն նաև Հայաստանի Հանրապետությունում համայնքային զարգացման ծրագրեր իրականացնող մի շարք միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների (ծրագրերի) հետ համագործակցության հաստատման և համատեղ ծրագրերի իրականացման ուղղությամբ:

VI. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության 2009-2011 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով որպես ծրագրի իրականացման կողմնորոշիչ չափաքանակ է սահմանվել 600,000.0 հազ. դրամ, սակայն բյուջետային գործընթացների շրջանակներում քննարկումների արդյունքներով ծրագրի իրականացման համար Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 573,500.0 հազ. դրամի ֆինանսական միջոցների հատկացում:

Համաձայն «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի պահանջների՝ փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության տարեկան ծրագրերի ֆինանսավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից՝ առանձին տողով:

VII. Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Յ ՈՒ Յ Յ

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառումը	Կատարողը	Կատարման ժամկետը
1.	ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության համապատասխան ենթակառուցվածքների ստեղծում և ամրապնդում *Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կենտրոնական գրասենյակի, մարզային մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ամրապնդում ու դրանց գործունեության ընդլայնում, ինչպես նաև նոր ներկայացուցչության ստեղծում*	Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ (համաձայնությամբ)	2009 թվականի ընթացքում
2.	ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն *ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագիր* *ՓՄՁ-ի սուբյեկտների կապիտալի ֆինանսավորման ծրագիր* *ՓՄՁ-ի սուբյեկտներին տրամադրվող վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման ծրագիր*	Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ (համաձայնությամբ)	սկսած 2009 թվականի 1-ին եռամսյակից
3.	Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն	Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ (համաձայնությամբ)	սկսած 2009 թվականի 2-րդ եռամսյակից
4.	ՓՄՁ-ի սուբյեկտներում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցություն	Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ (համաձայնությամբ)	2009 թվականի ընթացքում
5.	ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջմղմանն աջակցություն	Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ (համաձայնությամբ)	սկսած 2009 թվականի 1-ին եռամսյակից

6.	ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն	Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ (համաձայնությամբ)	սկսած 2009 թվականի 1-ին եռամսյակից
7.	ՓՄՁ-ի սուբյեկտներին ուսուցողական աջակցություն	Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ (համաձայնությամբ)	սկսած 2009 թվականի 1-ին եռամսյակից
8.	Հայաստանում «Ձեռնարկությունների եվրոպական ցանցի» հաղորդակցման կենտրոնի գործունեության կազմակերպում	Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ (համաձայնությամբ)	2009 թվականի ընթացքում
9.	Միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ-ի զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակում և իրականացում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ շահագրգիռ նախարարություններ	2009 թվականի ընթացքում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ